

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրության ներածություն. Աշխարհագրությունը որպես գիտությունների համակարգ: Տեղը գիտությունների դասակարգման մեջ: Կանտ - Հետնեյան դասակարգումը: Աշխարհագրությունը որպես օբյեկտային և միաժամանակ մեթոդաբանական գիտություն: Աշխարհագրության տեսության փիլիսոփայական հիմքը: Տարածական մոտեցումը՝ որպես աշխարհագրական ուսումնասիրությունների ասպեկտ: Կապը սիներգետիկայի որպես ինքնակազմակերպման մասին գիտության հետ: Տեղը երկրի մասին գիտությունների համակարգում: Աշխարհագրական գիտությունների համակարգի կառուցվածքը: Երեք կարևոր բաղադրամասերը: Ընդհանուր (տեսական) աշխարհագրություն, բնական (ֆիզիկական) աշխարհագրություն, հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրություն: Աշխարհագրական գիտության՝ բովանդակությունը, խնդիրները, դրանց էվոլյուցիան:

Աշխարհագրության պատմություն. Աշխարհագրական գիտության ձևավորման պատմական նախադրյալները: Մարդ-բնություն փոխհարաբերությունների անդրադարձը աշխարհագրական գիտելիքների ձևավորման վրա: Աշխարհագրությունը անտիկ ժամանակաշրջանում, միջին դարերում: Վերածննդի և աշխարհագրական մեծ հայտանգործությունների ժամանակաշրջան: Նոր ժամանակաշրջանի աշխարհագրությունը: Հայ աշխարհագրական մտքի զարգացումը: Ժամանակակից աշխարհագրության հիմնախնդիրները:

Հետազոտության մեթոդները և հիմնարար հասկացությունները.

Աշխարհագրական հետազոտության մեթոդների առանձնահատկությունները, դասակարգումը: Նկարագրական, համեմատական, գեոքիմիական, գեոֆիզիկական, մաթեմատիկական, վիճակագրական, դիստանցիոն

մեթոդներ: Քարտեզագրական մեթոդի դերը և նշանակությունը: Գեոինֆորմացիոն մեթոդ: Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր /ԱՏՀ/: Աշխարհագրական հետազոտությունների դաշտային, տվյալների մշակման և անալիզի մեթոդներ: Գեոինֆորմացիոն համակարգերի մոդելավորումը և կառուցումը լանդշաֆտային հիմքի վրա: Աշխարհագրության հիմնարար հասկացությունները: Աշխարհագրական դիրք: Համակարգային և կառուցվածքային մտեցումներ: Շրջան, շրջանացում: Աշխարհագրական համակարգ: Ներքին ռեֆլեքսիայի հիմնախնդիրը աշխարհագրության մեջ:

Համալիր ֆիզիկական աշխարհագրություն: Տեսական հիմքը. Ուսմունք աշխարհագրական թաղանթի մասին: Զարգացման փուլերը և գործոնները: Հորիզոնական և ուղղաձիգ կառուցվածքը: Դինամիկական և ֆունկցիոնալությունը: Երկրի ոլորտների փոխազդեցության օրինաչափությունները և դրանց դերը աշխարհագրական թաղանթի ձևավորման մեջ: Արեգակնային համակարգի ալիքային կառուցվածքը և փոխհատուցման օրենքը: Աշխարհագրական գոտիականություն և զոնայականություն: Երկրի լանդշաֆտային թաղանթի տարածաժամանակային դիֆերենցիացիան (մասնատումը): Հորիզոնական զոնայականություն և վերընթաց գոտիականություն: Աշխարհագրական զոնայականության պարբերականության օրենքը: Սեկտորայնություն, ազոնալություն, պրովինցիալություն: Զոնայականության սկզբունքների մշակումը Պասսարգեի, Հումբոլտի, Դոկուչանի, Գրիգորևի, Բերգի, Մարկովի, Կալեսնիկի, Սոլնցևի, Իսաչենկոյի կողմից: Համալիր համագիտական և կիրառական ֆիզիկական աշխարհագրության շրջանացում: Օբյեկտիվացման և շրջանացման պրոբլեմը: Շրջանացումը որպես միջոցառում և արդյունք:

Ուսմունք երկրահամակարգերի մասին: Բնական երկրահամակարգերի հիերարխիան: Կիսահամակարգություն: Դասակարգում: Երկրահամա-

կարգերի ինվարիանտ և հաջորդական դինամիկ շարքեր: <<Վիճակ>> և <<Երթափոխ>> հասկացությունները:

Երկրի աշխարհագրական թաղանթի ոլորտները: Երկրի աշխարհագրական թաղանթի և դրա կառուցվածքի մասին ժամանակակից պատկերացումները: Աշխարհագրական թաղանթի ոլորտները՝ քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ, դրանց կազմը, կառուցվածքը, միասնությունը և որակական տարբերությունները:

Ուսմունք քարոլորտի մասին: Երկրի ներքին կառուցվածքը, կազմը: Ընդհանուր տեղեկություններ երկրի հասակի մասին: Ժամանակագրական աղյուսակ: Երկրակեղևի հիմնական կառուցվածքային տարրերը: Ներծին պրոցեսները և ռելիեֆը: Արտածին պրոցեսները և ռելիեֆը: Լեռները և հարթավայրերը, որպես ռելիեֆագոյացնող ներծին և արտածին պրոցեսների արգասիք: Լեռների և հարթավայրերի դասակարգումը, դրանց աշխարհագրական տեղաբաշխումը:

Ուսմունք ջրոլորտի մասին: Զրոլորտը որպես աշխարհագրական թաղանթի բաղկացուցիչ մաս: Զրի ֆիզիկական և քիմիական հատկությունները: Զրոլորտի ծավալն ու կառուցվածքը: Զրի շրջապտույտը բնության մեջ: Համաշխարհային ջրային հաշվեկշիռ:

Համաշխարհային օվկիանոս: Հիմնական բնութագրիչները (աղիություն, ջերմային ռեժիմ, սառցային երևույթներ): Օվկիանոսային ջրի շարժումը, առաջացման մեխանիզմը և դերը աշխարհագրական թաղանթում: Օվկիանոսը որպես կյանքի միջավայր: Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը:

Ցամաքի ջրերը որպես ջրի համաշխարհային շրջապտույտների մաս: Ստորերկրյա ջրեր, ծագումը, սնումը, տեղադրման պայմանները, տեսակները: Գետեր, առաջացումը, ձևաչափական տարրերը, սնումը, ռեժիմը, հոսքի բնութագրիչները, ջերմային և կենսաբանական ռեժիմը:

Ճահիճների առաջացումը և զարգացումը:

Սառցադաշտերի ձևավորման և զարգացման պայմանները, տիպերը: Երկրագնդի քաղցրահամ ջրերի հիմնահարցը:

Ուսմունք մթնոլորտի մասին: Գաղափար երկրի մթնոլորտի մասին: Սահմանները, կազմը, կառուցվածքը, նշանակությունը:

Արեգակնային ճառագայթումը որպես աշխարհագրական թաղանթի էներգիայի հիմնական աղբյուր: ճառագայթման հաշվեկշիռ, նրա բաղադրիչները:

Գործունյա մակերևույթի և մթնոլորտի ջերմային ռեժիմը: Ջերմային հաշվեկշիռ և նրա բաղադրիչները: Ջերմային գոտիներ:

Մթնոլորտային տեղումներ, տեսակները, խոնավացման գործակից: Խոնավության տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունները:

Մթնոլորտային ճնշում: Չափման մեթոդներն ու միավորները: Մթնոլորտային ճնշման փոփոխման պայմանները: ճնշման տեղաբաշխման օրինաչափությունները: Ցիկլոններ, անտիցիկլոններ: Քամիներ, բնութագրիչները, տիպերը: Օդային զանգվածներ, ձևավորումը, տիպերը: Մթնոլորտի ճակատներ:

Մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը պայմանասիրող գլխավոր գործոնները:

Եղանակ և կլիմա: Եղանակաստեղծ տարրեր և կլիմայագոյացնող գործոններ: Կլիմաների դասակարգումը: Երկրի կլիմայական գոտիները և մարզերը: Կլիմայի փոփոխությունները և տատանումները: Ապագայի կլիմաների կանխատեսման հիմնահարցերը: Կլիմայի գլոբալ փոփոխություն: Հնարավոր պատճառները և հետևանքները:

Ուսմունք կենսոլորտի մասին: Կենսոլորտը որպես աշխարհագրական թաղանթի բաղկացուցիչ մաս: Կենդանի օրգանիզմների գոյության պայմանները և էկոլոգիական գործոնները: Նյութի շրջապտույտի առանձնահատկությունները կենսոլորտում: Արեալ, Արեալների դասակարգումը ըստ

ձևի, չափերի: Ֆլորա, ֆլորայի տարրերը, ֆլորիստիկական շրջանացում: Ֆաունա, ֆաունիստական համալիրներ, շրջանացում:

Բիոցենոզ: Համակեցությունների աշխարհագրական տարածման օրինաչափությունները: Աշխարհագրական տարբեր գոտիների կենսացենոզների բնութագիրը:

Բնության և հասարակության փոխհարաբերությունը. Բնական լանդշաֆտների սոցիալ-տնտեսական ֆունկցիան: Կուլտուրական լանդշաֆտներ: Կիրառական լանդշաֆտագիտություն: Լանդշաֆտա-էկոլոգիական փորձաքննություն: Լանդշաֆտային կանխատեսում: Աշխարհագրական թաղանթի զարգացման ժամանակակից փուլը: Բնական լանդշաֆտների փոփոխումը և բնօգտագործման հիմնախնդիրները:

Բնական ռեսուրսներ. կլիմայական, ջրային, կենսաբանական, օգտակար հանածոներ: Դրանց դերն ու նշանակությունը մարդկության աճող պահանջմունքները բավարարելու գործում:

Անթրոպոգեն լանդշաֆտներ: Բնական միջավայրի փոփոխման դրական և բացասական հետևանքները: Արիդ և հումիդ լանդշաֆտների ծավալուն յուրացումը (ջրային և ֆիտոմելիորացիա), անտառների, արոտավայրերի վերականգնումը, պարենային և տեխնիկական կուլտուրաների բերքատվության բարձրացումը:

Բնական միջավայրի դեգրադացիան. մթնոլորտի, քաղցրահամ և ծովային ջրերի աղտոտումը, անտառների կրճատումը, գետային հոսքի խախտումը, հողաձածկույթի քայքայումը, ցամաքի անապատացումը, կենսաբազմազանության նվազումը:

Հատուկ պահպանվող տարածքների դերը բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի ու բնական լանդշաֆտների պահպանման գործում: Աշխարհագրական միջավայրի բարելավման միջոցառումները: Բնականազարման հիմնահարցերը: Բնակչության էկոլոգիական դաստիարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Ա. Գ. Կենսաաշխարհագրություն, դասագիրք ԲՈՒՀ-երի ուսանողների համար, Երևան, 2009, էջ 304
2. Կլիմայի փոփոխության մասին երրորդ ազգային հաղորդագրություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, Երևան, 2015, 191 էջ:
3. Վալեսյան Լ.Հ., Աշխարհագրական կանխատեսում: Ե., 2008, 264 էջ:
4. Վալեսյան Լ.Հ., Աշխարհագրական գիտությունների մեթոդական և տեսական հիմունքներ: Երևան, 2004, 264 էջ:
5. Վարդանյան Թ.Գ., Մարգարյան Վ.Գ., Օդերևութաբանություն և կլիմայագիտություն, Ձեռնարկ բուհերի համար, Երևան.: „Աստղիկ գրատուն“, հրատ., 2014, 532 էջ:
6. Антипов А.Н., Дроздов А.В. и др. Ландшафтное планирование: принципы, методы, европейский и российский опыт, Иркутск: Изд-во Института географии СО РАН, 2002. - 141с.
7. Арманд Д.Л. Наука о ландшафте. М. 1975, с. 5-46, 237-274.
8. Баранский Н.Н. Научные принципы географии. Избр.тр. М. Мысль.1980. 239с.
9. Бунге В. Теоретическая география. Пер. с англ., М. Прогресс, 1967, 279с.
10. Власова Т. В., Аршинова М. А., Ковалева Т. А., Физическая география материкови океанав. Учебник. М. 2005, 688с.
11. Воронов А. Г. Дроздов Н. Н., Криволуцкий Д.А., Мяло Е.Г., Биогеография с основами геологии, М. 2003., 419с.
12. Говорушко С.М. Взаимодействие человека с окружающей средой. Киров-М., 2007, 654с.
13. Исаченко А.Г. Теория и методология географической науки. Л., 2004, 395 с.
14. Котляков В.М. География в меняющемся мире. Избранные сочинения, книга 3. М.-“Наука”, 2001, 411с.
15. Котляков В.М. География, общество, окружающая среда. “Экологическое планирование и управление”, N2(2), 2007.
16. Максаковский В.П. Географическая культура. М., 1998, 416с.
17. Михайлов В.Н. и др., Гидрология, М., 2005, 464 с.
18. Михайлов Н.И. Физико-географическое районирование. М. 1985, С.59-106

19. Николаев В. А., Ландшафтоведение, М. Изд. МГУ, 2000, 322с.
20. Проблемы гидрологии и гидроэкологии. вып. 2 – Гидроэкология: Теория и практика /Под ред Н.И. Алексеевского. М., 2004, 507 с.
21. Савцова Т.М., Общее Землеведение. Учебное пособие для студентов высших учебных заведений. - М.: Академия, 2007. - 416 с.
22. Трофимов А. М, Игонин Е. И. Концептуальные основы моделирования в географии. Казань, 2001, 340 с.
23. Хаггет П., География: синтез современных знаний. Пер. с англ. М.Прогресс, 1979, 684с.
24. Харвей Д. Научные объяснение в географии. М.,1974, 502с.
25. Хромов С.П., Петросянц М.А., Метеорология и климатология. М., 2001, 528с.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության ուսումնասիրության առարկան և օբյեկտը. Աշխարհագրության տեղը գիտությունների համակարգում: Գիտությունների Կանտ-Հետներյան դասակարգումը և աշխարհագրությունը: Գիտությունների օբյեկտային դասակարգումը և աշխարհագրությունը: Աշխարհագրությունը որպես օբյեկտային և միաժամանակ մեթոդաբանական գիտություն: Աշխարհագրական մտածողություն: Աշխարհագրական մոտեցում: Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության առնչությունները տնտեսագիտության, ժողովրդագրության, ազգագրության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության հետ: Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության կապը բնաաշխարհագրական գիտությունների հետ: Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության կառուցվածքը, գլխավոր ճյուղերն ու ենթաճյուղերը: Համաաշխարհային տնտեսության և տնտեսության ճյուղերի աշխարհագրություն, բնակչության աշխարհագրություն, սոցիալական աշխարհագրություն, քաղաքական աշխարհագրություն

գրություն սոցիալ-տնտեսական երկրագրություն, սոցիալ-տնտեսական քարտեզագրություն: Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության՝ որպես գիտության ինքնուրույն ճյուղի ձևավորումը, զարգացման հիմնական փուլերը:

Բնության և հասարակության փոխազդեցության հիմնախնդիրները: Բնական ռեսուրսներն ու բնական պայմանները հասարակական կյանքում և արտադրության պրոցեսում: Բնական պայմանները և ռեսուրսները որպես տնտեսական կատեգորիա: Բնական պայմանների և բնական ռեսուրսների տնտեսական, սոցիալական և էկոլոգիական գնահատումը: Կայուն զարգացման կոնցեպցիան:

Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրության հիմնական կատեգորիաներն ու հասկացությունները. Տնտեսաաշխարհագրական դիրք, աշխատանքի տարածքային (աշխարհագրական) բաժանում, շրջան, շրջանագոյացում, շրջանացում, հասարակության տարածքային կառուցվածք և տարածքային կազմակերպում:

Գիտատեխնիկական առաջադիմության գլխավոր ուղղությունների ազդեցությունը արտադրության տարածքային կազմակերպման վրա. Տնտեսական և սոցիալ-տնտեսական տարածքային համակարգերը և կառուցվածքները: Տարածքային-արտադրական համալիր (ՏԱՀ): Էներգա-արտադրական ցիկլ (շղթա):

Բնակչությունը որպես սոցիալ-տնտեսաաշխարհագրական հետազոտության օբյեկտ. Բնակչության բնական վերարտադրությունը, կազմը (ռասսայական, ազգային, կրոնական, սոցիալական): Բնակչության միգրացիաները: Բնակչության տարաբնակեցման համակարգերը: Ուրբանացումը: Գեոուրբանիստիկա: Քաղաքը որպես տնտեսական և սոցիալական աշխարհագրական հետազոտության կարևոր օբյեկտ: Քաղաքային ագլոմերացիա (կոնուրբացիա), մեգալոպոլիս: «Կենտրոնական տեղերի տեսությունը»: Գյուղական տարաբնակեցում և գյուղական տարածքներ:

Բնակչության ապրելակերպի աշխարհագրական ուսումնասիրությունը: Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը:

Տնտեսության ճյուղերի աշխարհագրական վերլուծությունը. Արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի աշխարհագրական վերլուծությունը: Տնտեսական ցուցանիշների համակարգը: Արտադրության տեղաբաշխման տեսությունները, սկզբունքները: Արդյունաբերական արտադրության տեղաբաշխման գործոնները: Գյուղատնտեսության տեղաբաշխման գործոնները:

Հասարակական կյանքի քաղաքական ոլորտի աշխարհագրական հետազոտությունը. Քաղաքական աշխարհագրության ձևավորումը, պետություն, պետական կառուցվածք, պետական տարածք և պետական սահմաններ, պետության տարածքային կազմակերպումը, պետական քաղաքականություն: Աշխարհաքաղաքականության. ծագումը, զարգացման գլխավոր փուլերը /Ֆ.Ռաոցել, Ռ.Չելլեն, Հ.Մակինդեր/: Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման գլխավոր փուլերը, պետությունների քաղաքաաշխարհագրական տիպաբանությունը: Սոցիալ-տնտեսական երկրագրությունն ընդհանուր աշխարհագրական երկրագրության կազմում: Երկրագրության պրոբլեմային կողմնորոշումը:

Տնտեսական և սոցիալական աշխարհագրության հետազոտության մեթոդները. համեմատական աշխարհագրական, քարտեզագրական, վիճակագրական, մաթեմատիկական մոդելավորման, սոցիոլոգիական և այլ մեթոդներ:

Սոցիալ-տնտեսաաշխարհագրական կանխատեսում. Կանխատեսման տեսական-մեթոդաբանական հիմունքները: Սոցիալ-տնտեսաաշխարհագրական կանխատեսումների համա-կարգը, մասնավոր կանխատեսումները, կանխատեսման մեթոդները:

Համաշխարհային տնտեսությունը որպես միասնական բարդ համակարգ. ձևավորումը, զարգացումը. Համաշխարհային տնտեսության աշ-

խարհագրական «մոդելը»: Արտադրության տարածքային կենտրոնացումը և ապակենտրոնացումը: Ռեգիոնալ քաղաքականություն. էությունը, տարատեսակները:

Հայաստանի աշխարհագրություն. Հայաստանի աշխարհագրական ուսումնասիրությունը որպես խոշոր մասշտաբի /խորացված/ ռեգիոնալ աշխարհագրական հետազոտության օրինակ:

Հայաստանի պատմաաշխարհագրական գլխավոր առանձնահատկությունները: Աշխարհագրական /այդ թվում աշխարհաքաղաքական/ դիրքի գնահատումը: Զարգացման բնական նախադրյալների բնութագիրը: Բնակչությունը, հիմնական պատմական փոփոխությունները, ներքին և արտաքին միգրացիաները, ազգային-էթնիկական կազմի փոփոխությունները: Հայկական սփյուռքի ձևավորումը, աշխարհագրությունը:

Հայաստանի Հանրապետություն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Ձևավորման պատմաաշխարհագրական և աշխարհաքաղաքական նախադրյալները: Աշխարհագրական դիրքի և դրա տարատեսակների վերլուծությունը: Բնական պայմաններն ու ռեսուրսները: Բնակչությունը: Տնտեսությունը: Տեղը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում, արտաքին տնտեսական կապերը: Կոմպլեքսային զարգացման և մասնագիտացման ցուցանիշները: Բնատեսուրսային ապահովման, բնօգտագործման և բնական միջավայրի պահպանության և բարելավման հիմնախնդիրները:

Տնտեսական և սոցիալական աշխարհագրության տեղը հասարակության կյանքում. Տնտեսական և սոցիալական աշխարհագրության աշխարհայացքային, համամշակութային, կրթադաստիարակչական և կիրառական նշանակությունը: Դերը հասարակության տարածքային կազմակերպման, ռեգիոնալ քաղաքականության, վարչատարածքային բաժանման կատարելագործման, բնակչության, արտադրության և ենթակառուցվածքի տեղաբաշխման, ռացիոնալ բնօգտագործման, քաղաքաշի-

նության և շրջանային հատակագծման, շրջանների ու պետություն-ների արտաքին կապերի ու հարաբերությունների զարգացման, տարածքային սոցիալ-տնտեսական գործընթացների քարտեզագրման ու մոդելավորման, ռեգիոնալ զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման, մշակույթի ու կրթության զարգացման բնագավառում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Թ.Խ. Աշխարհագրության համառոտ պատմություն, Ե., 1976 թ.
2. Մանասյան Մ. Հասարակական-աշխարհագրական հետազոտության մեթոդներ: Երևան, ԵՊՀ, 2008:
3. Վալեսյան Լ.Հ. Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ, Ե.2004:
4. Վալեսյան Լ.Հ. Հասարակական աշխարհագրության ներածություն, Ե. 1999:
5. Վալեսյան Լ.Հ. Քաղաքական աշխարհագրություն, Ե. 2008:
6. Վալեսյան Լ.Հ. Աշխարհագրական կանխատեսում, Ե. 2007:
7. Վալեսյան Լ.Հ. Հայկական ԽՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Ե. 1988:
8. Алаев Э.Б. Социально-экономическая география. Понятийно- терминологический словарь. М., 1983.
9. Баранский Н.Н. Научные принципы географии. Избр.тр. М., “Мысль”, т. 1, 1980, т. 2, 1981.
10. Бунге В.Теоретическая география, Пер.с англ.«Прогрес», 1967,279 с.
11. Географический энциклопедический словарь. Понятия и термины. М. 1988.
12. Геттнер А. География: ее история, сущность и методы. Пер. С. нем. Л.-М., 1930, 416 с.
13. Голубчик М.М. и др. Экономическая и социальная география. М. 2003
14. Голубчик М.М., Евдокимов С.П. и др. Теория и методология географической науки, М. 2005.
15. Дзенис З.Е. Методология и методы социально-экономических исследований. Рига, 1980.

16. Джеймс Мартин. Всевозможные миры. М. "Прогресс", 1988.
17. Изард У. Методы регионального анализа: введение в науку о регионах. М. "Прогресс", 1966, - 659 с.
18. Колосов В.А. Мироненко Н. Геополитика и политическая география. М., 2001.
19. Колосовский Н.Н. Основы экономического районирования. М., 1958, 200 с.
20. Ковалев С.А. Сельское расселение. М.: Изд-во МГУ, 1963.
21. Харвей Д. Научное объяснение в географии. Общая методология науки и методология географии. М., 1974.
22. Хаггет П. Пространственный анализ в экономической географии. М. "Прогресс" 1979, 684 с.
23. Джонстон Р.Дж. География и географы. М., 1987.
24. Максаковский В.П. Общая экономическая и социальная география. М., 2009.
25. Максаковский В.П. Географическая культура, М., 1998.
26. Мироненко Н.С. Страноведение (теория и методы), М., 2001.
27. Хаггет П. География: синтез, современных знаний, Пер.с англ. «Прогрес», 1979с.
28. Скопин А.Ю. Введение в экономическую географию. М., 2001.
29. Шарыгин М.Л. Экономическая и социальная география. Основы науки. М., 2003.
30. Покшишевский В.В. Население и география: Теоретические очерки. М., "Мысль", 1978, 315 с.
31. Перцик Е.Н. Районная планировка. Территориальное планирование. М., 2006.